ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 682 | *Տեսակը* | Ինկորպորացիա |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2000.11.15/26(124) | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 25.10.2000 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 25.10.2000 |
| *Վավերացնող մարմինը* | ՀՀ Նախագահ | *Վավերացման ամսաթիվը* | 25.10.2000 |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 25.11.2000 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*25 հոկտեմբերի 2000 թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հոկտեմբերի 2000 թվականի N 682
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների (այսուհետև` քանդման ենթակա վթարային բնակելի տներ) բնակիչներին վերաբնակեցնելու անհրաժեշտությունից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման ծրագրին (կցվում է):

2. Հաստատել`

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման կարգը (կցվում է).

բ) Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների քանդման առաջնահերթությունը որոշելու կարգը (կցվում է).

գ) Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման և այդ տների

քանդման ծրագիրը (կցվում է) ու նշված ծրագրի իրականացման պատասխանատու ճանաչել Երևանի քաղաքապետին:

3. Սահմանել, որ՝

ա) պետական միջոցների հաշվին բնակարաններով ապահովվում են քանդման ենթակա պետական կամ համայնքային բնակելի ֆոնդի վարձակալները (այսուհետև՝ վարձակալներ) և բնակելի տների բնակարանների սեփականատերերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից հաշվառման և տվյալ բնակարաններում առնվազն 5 տարի բնակվող փախստականները.

բ) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակարաններն զբաղեցնող բնակիչներին՝

վարձակալներին և փախստականներին վարձակալության է հանձնվում մեկ այլ բնակարան՝ նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսդրության նորմերով սահմանվածը կամ, համապատասխան բնակարանի առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում, դրամական աջակցություն՝ հաստատված ծրագրով՝ շուկայական արժեքի չափով.

սեփականատերերին իրենց հայեցողությամբ հատկացվում է մեկ այլ բնակարան՝ նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվով կամ դրամական փոխհատուցում՝ հասանելիք բնակարանի շուկայական արժեքի չափով:

***(3-րդ կետը լրաց. 06.11.01 N 1070)***

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեների նախագծերը կազմելիս քննարկել Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման ծրագրի իրականացման և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 5-ի «Վթարային բնակելի շենքերից բնակիչների վերաբնակեցման հայեցակարգի մասին» N 130 որոշմամբ հավանության արժանացած՝ վթարային բնակելի շենքերից բնակիչների վերաբնակեցման հայեցակարգի դրույթների համաձայն բնակելի շենքերի անձնագրավորման համար անհրաժեշտ միջոցների հատկացման հնարավորության հարցը:

5. Երևանի քաղաքապետին՝

ա) նշված ծրագիրն իրականացնելիս՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել ճշտված տեղեկատվություն քանդման ենթակա վթարային բնակելի տների՝ վերաբնակեցման ենթակա ընտանիքների թվի, կազմի և բնակեցման հիմքերի մասին.

բ) կազմել նշված ծրագրով նախատեսված քանդման ենթակա վթարային բնակելի տների տեղաբաշխման ուրվագիծը և դրա հիման վրա ճշգրտումներ կատարել իրացվող տարածքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում կամ կառուցապատման նախագծերում:

6. Սահմանել, որ սույն որոշմամբ հավանության արժանացած ծրագրի իրականացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարությունը:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**

**Ա. Մարգարյան**

## Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ

*Ծրագրի նպատակը* պետական, համայնքային և հանրային բնակելի ֆոնդի ՀՀ օրենքով սեփականաշնորհման ոչ ենթակա վթարային, ինչպես նաև մինչև 01.01.99 թ. շահագործման ընթացքում քանդման ենթակա՝ վթարային դարձած բնակարանային-շինարարական կոոպերատիվ բնակելի տներում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրների արագ լուծումն է՝ նրանց համար պետական միջոցների հաշվին բնակարանային շուկայից բնակարանների գնման կամ դրամական փոխհատուցման միջոցով, ինչպես նաև նշված վթարային շենքերի վնասազերծումն ու դրանց զբաղեցրած տարածքների բարեկարգումը:

***1. Ներածություն***

Սույն ծրագիրը մշակված է՝ բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի: Աղետի գոտու բնակավայրերի նմանատիպ խնդիրները լուծվում են ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի N 711 որոշմամբ հավանության արժանացած «Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրով»:

***2. Ներկա վիճակի վերլուծությունը***

Համաձայն մասնագիտացված կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների՝ 01.01.99 թ.

դրությամբ առկա է քանդման ենթակա IV աստիճանի վնասվածություն ունեցող 34 բնակելի տուն Երևան քաղաքում, ընդ որում, միայն Աջափնյակի համայնքի տարածքում՝ 28 տուն:

Նշված տների վթարային վիճակի պատճառները հիմնականում պայմանավորված են ինչպես տեղանքների գրունտների ֆիզիկամեխանիկական հատկություններով (մասնավորապես, Աջափնյակի համայնք), այնպես էլ տների ոչ ճիշտ շահագործմամբ և շինարարական աշխատանքների անորակ իրականացմամբ:

IV աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների ցանկն ըստ համայնքների և դրանց բնութագրերը տրվում են աղյուսակ 1-ում:

34 բնակելի տներից 16-ը ամբողջությամբ ունի IV աստիճանի վնասվածություն և ենթակա է քանդման՝ լրիվ ծավալով: Մնացած բնակելի տներում վթարային վիճակում են և ենթակա են քանդման միայն առանձին կողաճակատային հատվածները:

Ցանկում ընդգրկված, բնակության համար վտանգավոր տներից բնակիչների վերաբնակեցումն սկսվել է դեռևս 1984 թ., վերաբնակեցվել է 525 ընտանիք: Սակայն վերաբնակեցումն իրականացվել է մասնակիորեն, որի պատճառով բնակելի տները չեն քանդվել: Հետևանքում տեղի է ունեցել ազատված բնակարանների կրկնակի «ժամանակավոր» բնակեցում տարբեր բնակիչների (փախստականներ, ազատամարտիկների ընտանիքներ և այլն) կողմից: Ազատված բնակարանների մի մասը բնակեցվել է տարերայնորեն, ինքնակամ:

Քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակարաններում բնակվող ընտանիքների վերաբերյալ տվյալները տրված են աղյուսակ 2-ում: 1154 բնակարաններից 552 բնակարան (47.8%) զբաղեցնում են պետական և համայնքային բնակֆոնդի վարձակալները (այսուհետև՝ վարձակալներ), 105-ը (9.1%)՝ սեփականատերերը, 214-ը (18.5%)՝ փախստականները, 127-ը (11.0%)՝ ինքնակամ:

Հարկ է նշել, որ ծրագրում ընդգրկված բնակելի տների տեխնիկական բնութագրերի հիման վրա հնարավոր չէ կատարել բնակելի տների քանդման առաջնահերթության ընտրություն, ուստի, անհրաժեշտություն է առաջանում բնակելի տների քանդման առաջնահերթությունը որոշել որոշակի ցուցանիշների կիրառմամբ, բալային գնահատման եղանակով:

***3. Ծրագրի իրականացման սկզբունքները և դրույթները***

Ծրագրով նախատեսվում է պետական օժանդակությամբ բնակարաններով ապահովում քանդման ենթակա տներում բնակվող հետևյալ բնակիչների նկատմամբ՝

- բնակարանների վարձակալների և սեփականատերերի,
- ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից հաշվառված և տվյալ բնակարաններում 5 տարուց ոչ պակաս բնակվող փախստականների:

Քանդման ենթակա տների բնակարաններում բնակվող բնակիչների վերաբնակեցումն իրականացվում է պետական միջոցների հաշվին՝ բնակարանների գնման և նրանց տրամադրման կամ դրամական փոխհատուցման եղանակով, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Ձեռք բերվող (գնվող) բնակարանների չափը որոշվում է՝

- վարձակալներին և փախստականներին՝ նախկինում զբաղեցրած բնակարանի չափին համապատասխան, բայց ոչ ավելի, քան ՀՀ բնակարանային օրենսդրությամբ սահմանված նորմերից,

- սեփականատերերին՝ նախկինում զբաղեցրած բնակարանի չափին համապատասխան:

Վերաբնակեցվող բնակիչների վերաբերյալ տվյալները տրված են NN 3 և 4 աղյուսակներում:

Ձեռք բերված բնակարանները հանձնվում են վարձակալությամբ և կարող են մասնավորեցվել «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման համար ուղղվող հատկացումների սահմանային չափը որոշվում է ելնելով ձեռք բերվող բնակարանների քանակից, չափից (սենյակների թվով) և տվյալ բնակավայրում (Երևանում՝ բացառելով առաջին գոտում ձևավորված արժեքը) համապատասխան բնակարանների ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

Շուկայական միջինացված արժեքի վերաբերյալ տվյալները վերցվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեից՝ ծրագրի իրականացման սկզբին նախորդող եռամսյակի դրությամբ:

Ինքնակամ զբաղեցված բնակարաններն ազատվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բնակիչների վերաբնակեցման աշխատանքներն ավարտելուց հետո իրականացվում է բնակելի շենքի քանդում մրցութային հիմունքներով ընտրված կազմակերպության կողմից՝ այդ նպատակների համար պետական բյուջեով նախատեսված հատկացումների սահմաններում, հաշվի առնելով շինարարության համար պիտանի նյութերի օգտագործման հնարավորությունը:

Տարբեր պատճառներով բնակարանն ստանալուց հրաժարվող բնակիչները պարտավոր են ազատել զբաղեցրած բնակարանը: Նրանք ապահովվում են ժամանակավոր կացարաններով և հերթագրվում օրենսդրությամբ սահմանված կարգով բնակարանային պայմանների բարելավման համար:

Քանդման ենթակա բնակելի տների բնակարանների բնակիչների վերաբնակեցումը նախատեսվում է իրականացնել պետական տարեկան ծրագրերի հիման վրա՝ այդ նպատակների համար պետական տարեկան բյուջեում նախատեսվող միջոցների սահմաններում: Ընդ որում, ծրագրում ընդգրկվող տների ցանկը որոշվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված վթարային բնակելի տների քանդման առաջնահերթության որոշման կարգի համաձայն:

***4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները***

Ծրագրի իրականացման նախնական արժեքը 2190 մլն դրամ:

Ընդհանուր ծավալից 1990 մլն դրամ (91%-ը) նախատեսվում է քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման համար և 200 մլն դրամ (9%-ը)՝ վթարային բնակելի տների քանդման աշխատանքների իրականացման համար (աղյուսակներ 5, 6, 7 (կցվում են):

Անհրաժեշտ միջոցների ծավալները հաշվարկված են՝ ելնելով վերաբնակեցվող ընտանիքներին հասանելիք բնակարանի (սենյակների թվով, Երևանում բացառելով առաջին գոտում ձևավորված արժեքը) ձևավորված միջինացված շուկայական արժեքից:

**Աղյուսակ 1**

**Ց Ա Ն Կ**

**ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ**

| | | Կառուցման թիվը | Շենքի տիպը (սերիա) | Հարկայնությունը | Սեկցիաների (մուտքերի) քանակը | Շենքի ընդհանուր մակերեսը (քառ. մ) | | Բնակար. թիվը | | Ծանոթագրություն | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ընդամենը | այդ թվում՝ քանդ. ենթ | ընդամենը | այդ թվում՝ քանդ. ենթ | տվյալներ վնասվածության աստիճանի վերաբերյալ | առաջարկություններ քանդման վերաբերյալ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | ք. Երևան ընդամենը | | | | | 99219 | 64555 | 1701 | 1190 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| | 1. Կենտրոն համայնք՝ | | | | | | | | | | |
| | Պուշկինի 34 | 1935 | աղյուս | 1 | բակային | 348 | 348 | 6 | 6 | IV աստիճան | շենքը քանդել ամբողջությամբ |
| 2 | Բրյուսովի 66 | 1950 | քարե | 2 | 1 | 560 | 560 | 8 | 8 | IV աստիճան | շենքը քանդել ամբողջությամբ |
| | | | | | | | | | | | |
| | 2. Աջափնյակ համայնք՝ | | | | | 84622 | 55874 | 1457 | 1025 | | |
| 1 | Շինարարների 6 | 1961 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 4176 | 72 | 72 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 2 | Շինարարների 14 | 1962 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 2088 | 72 | 36 | I-III մուտք IV աստ., IV-VI մ.-III աստ. | քանդել I-III մուտքերը |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Շինարարների 15 | 1963 | 1-451 | 4 | 3 | 1914 | 1914 | 33 | 33 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 4 | Շինարարների 23 | 1961 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 2088 | 72 | 36 | IV-VI մուտք IV աստ., I-III մ.-III աստ. | քանդել IV-VI մուտքերը |
| 5 | Շինարարների 24 | 1962 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 696 | 72 | 12 | IV մուտք IV աստ., մնացածը-III աստ. | քանդել IV-VI մուտքերը |
| 6 | Շինարարների 28 | 1962 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 2088 | 72 | 36 | I-III մուտք IV աստ., IV-VI մ.-III աստ. | քանդել I-III մուտքերը |
| 7 | Շինարարների 35 | 1965 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 696 | 72 | 12 | I մուտք IV աստ., II-VI մ.-III աստ. | քանդել I մուտքը |
| 8 | Սիսակյան 16 | 1964 | 1Ա-450-2 | 4 | 3 | 2088 | 2088 | 36 | 36 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 9 | Սիսակյան 22 | 1964 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 4176 | 72 | 12 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 10 | Էստոնական 5 (համատիրություն) | 1962 | 1Ա-450-2 | 4 | 3 | 2088 | 696 | 36 | 12 | III մուտք IV աստ., I-II մ.-III աստ. | քանդել III մուտքը |
| 11 | Էստոնական 11 | 1961 | 1Ա-450-2 | 4 | 3 | 2088 | 696 | 36 | 12 | I մուտք IV աստ., I-III մ.-III աստ. | քանդել I մուտքը |
| 12 | Էստոնական 13 | 1961 | 1Ա-450-2 | 4 | 3 | 2088 | 696 | 36 | 12 | III մուտք IV աստ., I-II մ.-III աստ. | քանդել III մուտքը |
| 13 | Ֆուչիկի 1 նրբ. 3 | 1962 | 1Ա-450-2 | 4 | 3 | 2552 | 252 | 44 | 44 | II մուտք IV աստ., I, III մ.-III աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 14 | Ֆուչիկի 1 նրբ. 9 | 1966 | 1-451-10 | 4 | 3 | 2552 | 2552 | 44 | 44 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 15 | Ֆուչիկի 10 | 1964 | 1-451-10 | 4 | 3 | 2552 | 2552 | 44 | 44 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 16 | Ֆուչիկի 12 | 1964 | 1-451-10 | 4 | 2 | 1856 | 1856 | 32 | 32 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 17 | Ֆուչիկի 19 | 1964 | 1-451-10 | 4 | 4 | 2552 | 2552 | 44 | 44 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Ֆուչիկի 20 (կոոպեր.) | 1963 | 1-451-10 | 4 | 2 | 1856 | 1856 | 32 | 32 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 19 | Մարգարյան 10 | 1964 | 1-451-17 | 4 | 4 | 2668 | 2668 | 44 | 44 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 20 | Մարգարյան 17 (կոոպեր.) | 1964 | 1-451-17 | 4 | 3 | 2552 | 2552 | 44 | 44 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 21 | Մարգարյան 29 | 1964 | 1-451-17 | 4 | 6 | 4176 | 4176 | 72 | 72 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| 22 | Հալաբյան 31 | 1962 | 1-451-17 | 4 | 6 | 4176 | 2088 | 72 | 36 | III մուտք IV աստ., մնացածը-III աստ. | քանդել I-III մուտքերը |
| 23 | Հալաբյան 49 | 1964 | 1-451-17 | 4 | 3 | 2552 | 2552 | 44 | 44 | II մուտք IV աստ., I, III մ.-III աստ | շենքը քանդել ամբողջությամբ |
| 24 | Հալաբյան 57 | 1963 | 1-451-17 | 4 | 3 | 2552 | 2552 | 44 | 44 | II մուտք IV աստ., I, III մ.-III աստ | շենքը քանդել ամբողջությամբ |
| 25 | Լենինգրադյան 24 | 1962 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 2088 | 72 | 36 | IV մուտք IV աստ., մնացածը-III աստ. | քանդել IV-VI մուտքերը |
| 26 | Արզումանյան 8ա | 1963 | 1Ա-450-2 | 4 | 6 | 4176 | 696 | 72 | 36 | IV-VI մուտք IV աստ., I, III մ.-III աստ. | քանդել IV-VI մուտքերը |
| 27 | Արզումանյան 12 | 1964 | 1Ա-450-2 | 4 | 3 | 2088 | 696 | 36 | 12 | I մուտք IV աստ., II, III մ.-III աստ. | քանդել I մուտքը |
| 28 | Աբելյան 5 | 1963 | 1-451-17 | 4 | 3 | 2088 | 2088 | 36 | 36 | IV աստ. | շենքը քանդել ամբողջությամբ |
| | 3. Էրեբունու համայնք | | | | | 5104 | 1276 | 90 | 27 | | |
| 1 | Գաջեգործների 40 | 1967 | 1Ա-450-6/67 | 5 | 4 | 2320 | 580 | 40 | 12 | I մուտք IV աստ., II-IV մ.-III աստ. | քանդել I մուտքը |
| 2 | Մուրացանի 192 | 1967 | 1Ա-450-6/67 | 5 | 4 | 2784 | 696 | 50 | 15 | I մուտք IV աստ., II-IV մ.-II աստ. | քանդել I մուտքը |
| | 4. Մալաթիա-Սեբաստիա համայնք | | | | | 2784 | 2784 | 48 | 48 | | |
| 1 | Արարատյան 1 զանգ.12 | | 1Ա-450-6/72 | 5 | 4 | 2784 | 2784 | 48 | 48 | IV աստիճան | շենքը քանդել ամբողջությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 5. Շենգավիթ համայնք | | | | | | | | | | |
| 1 | Եղբայրության 19 | 1962 | 1-451-17 | 4 | 3 | 2784 | 696 | 32 | 16 | III մուտք IV աստ., I-II մ.-II աստ. | քանդել III մուտքը |
| | 6. Նոր Նորք համայնք | | | | | | | | | | |
| 1 | Ջուղայի 5 | 1965 | | 5 | 5 | 3017 | 3017 | 60 | 60 | IV աստիճան | շենքը քանդել ամբողջությամբ |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզ,<br>գ. Ոսկեհատ,<br>բն. տուն | 1934 | քարե | 2 | 1 | 323 | 323 | 16 | 16 | IV աստիճան | շենքը քանդել ամբողջությամբ |
| | Ընդամենը | | | | | 99542 | 64878 | 1717 | 1206 | | |

***(Աղյուսակը փոփ., լրաց. 08.07.04 N 1122-Ն)***

**Աղյուսակ 2**

**Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր**

**ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ**

| | Հասցեն | Վթարային քանդման ենթակա բնակարան. թիվը | այդ թվում՝ | | զբաղեցված բնակարան. ընդ. թվից ըստ հիմունքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ազատ բնակ. թիվը | զբաղեցված բնակ. թիվը | վարձա-կալներ և սեփակա-նատերեր | | փախստա-կան ընտանիք. | հատկաց. ժամանակ. օգտագ. ոչ բնակեց. | ինքնա-կամ |
| | | | | | ընդա-մենը | այդ թվում՝ սեփակա-նատեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | ք. Երևան ընդամենը | 1190 | 28 | 1162 | 661 | 105 | 214 | 156 | 131 |
| | այդ թվում՝ | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1. Կենտրոն համայնք՝ | | | | | | | | |
| | Պուշկինի 34 | 6 | | 6 | 5 | | | | 1 |
| | Բրյուսովի 66 | 8 | | 8 | 4 | | | | 4 |
| | 2. Աջափնյակ համայնք՝ | 1025 | 24 | 1001 | 556 | 76 | 176 | 154 | 115 |
| 1 | Շինարարների 6 | 72 | 9 | 63 | 14 | 1 | 19 | 7 | 23 |
| 2 | Շինարարների 14 | 36 | 1 | 35 | 19 | 1 | 11 | 3 | 2 |
| 3 | Շինարարների 15 | 33 | | 33 | 11 | | 10 | 3 | 9 |
| 4 | Շինարարների 23 | 36 | | 36 | 16 | | | 14 | 6 |
| 5 | Շինարարների 24 | 12 | | 12 | 11 | | | 1 | |
| 6 | Շինարարների 28 | 36 | | 36 | 8 | | 6 | 13 | 9 |
| 7 | Շինարարների 35 | 12 | | 12 | 6 | 1 | 1 | 4 | 1 |
| 8 | Սիսակյան 16 | 36 | | 36 | 20 | | 1 | 12 | 3 |
| 9 | Սիսակյան 22 | 72 | | 72 | 18 | | 28 | 6 | 20 |
| 10 | Էստոնական 5 (համատիրություն) | 12 | | 12 | 11 | 3 | 1 | | |
| 11 | Էստոնական 11 | 12 | | 12 | 11 | 5 | | 1 | |
| 12 | Էստոնական 13 | 12 | 3 | 9 | 2 | | | 4 | 3 |
| 13 | Ֆուչիկի 1 նրբ. 3 | 44 | 1 | 43 | 43 | 1 | | | |
| 14 | Ֆուչիկի 1 նրբ. 9 | 44 | 1 | 43 | 7 | | 21 | 10 | 5 |
| 15 | Ֆուչիկի 10 | 44 | 1 | 43 | 20 | 1 | 9 | 5 | 9 |
| 16 | Ֆուչիկի 12 | 32 | | 32 | 10 | 2 | 12 | 2 | 8 |
| 17 | Ֆուչիկի 19 | 44 | | 44 | 6 | | 29 | 4 | 5 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Ֆուչիկի 20 (կոոպեր.) | 32 | | 32 | 7 | 7 | 15 | 5 | 5 |
| 19 | Մարգարյան 10 | 44 | | 44 | 31 | 4 | 3 | 6 | 4 |
| 20 | Մարգարյան 17 (կոոպեր.) | 44 | 1 | 43 | 43 | 43 | | | |
| 21 | Մարգարյան 29*) | 72 | | 72 | 60 | 1 | 1 | 10 | 1 |
| 22 | Հալաբյան 31 | 36 | 1 | 35 | 35 | 3 | | | |
| 23 | Հալաբյան 49 | 44 | | 44 | 26 | | 2 | 16 | |
| 24 | Հալաբյան 57 | 44 | 6 | 38 | 38 | | | | |
| 25 | Լենինգրադյան 24 | 36 | | 36 | 31 | | 1 | 4 | |
| 26 | Արզումանյան 8ա | 36 | | 36 | 12 | 1 | 5 | 18 | 1 |
| 27 | Արզումանյան 12 | 12 | | 12 | 11 | | | 1 | |
| 28 | Աբելյան 5 | 36 | | 36 | 29 | 2 | 1 | 5 | 1 |
| | 3. Էրեբունու համայնք | 27 | | 27 | 27 | 25 | | | |
| 1 | Գաջեգործների 40 | 12 | | 12 | 12 | 10 | | | |
| 2 | Մուրացանի 192 | 15 | | 15 | 15 | 15 | | | |
| | 4. Մալաթիա-Սեբաստիա համայնք | 48 | 3 | 45 | 0 | | 38 | 2 | 5 |
| 1 | Արարատյան 1 զանգ.12 | 48 | 3 | 45 | | | 38 | 2 | 5 |
| | 5. Շենգավիթ համայնք | | | | | | | | |
| 1 | Եղբայրության 19 | 16 | | 16 | 15 | | | | 1 |
| | 6. Նոր Նորք համայնք | | | | | | | | |
| 1 | Զուլայի 5 | 60 | 1 | 59 | 54 | 4 | | | 5 |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ | 16 | | 16 | 16 | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | 1206 | | 1178 | 677 | | | | 131 |

***(Աղյուսակը փոփ., լրաց. 08.07.04 N 1122-Ն)***

*) կոմունալ բնակեցում (ընտանիքների թիվը՝ 64)

Տվյալները ենթակա են ճշտման՝ տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում:

**Աղյուսակ 3**

## Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

## ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| NN Ը/Կ | ՀԱՍՑԵՆ | ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ԵՒ ՍԵՓԱԿԱ-ՆԱՏԵՐԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | ԳՐԱՆՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԹԻՎԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԻՑ՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 ՍԵՆՅԱԿԱՆՈՑ | | 2 ՍԵՆՅԱԿԱՆՈՑ | | 3 ՍԵՆՅԱԿԱՆՈՑ | | 4 ՍԵՆՅԱԿԱՆՈՑ | |
| | | | | ԸՆՏԱ-ՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ | ԳՐԱՆՑ-ՎԱԾ ԱՆՁ. ԹԻՎԸ | ԸՆՏԱ-ՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ | ԳՐԱՆՑ-ՎԱԾ ԱՆՁ. ԹԻՎԸ | ԸՆՏԱ-ՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ | ԳՐԱՆՑ-ՎԱԾ ԱՆՁ. ԹԻՎԸ | ԸՆՏԱ-ՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ | ԳՐԱՆՑ-ՎԱԾ ԱՆՁ. ԹԻՎԸ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | Ք. ԵՐԵՒԱՆ ԸՆԴԱՄԵՆԸ | 665 | 2513 | 176 | 472 | 315 | 1156 | 174 | 885 | | |
| | ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | | | | | | | | | | |
| | 1. ԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱՅՆՔ՝ | | | | | | | | | | |
| | ՊՈՒՇԿԻՆԻ 34 | 5 | 25 | 1 | 5 | 4 | 20 | | | | |
| | ԲՐՅՈՒՍՈՎԻ 66 | 4 | 26 | | | 2 | 13 | 2 | 13 | | |
| | 2. ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱՄԱՅՆՔ՝ | 560 | 2059 | 153 | 406 | 261 | 915 | 146 | 738 | | |
| 1 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 6 | 14 | 46 | 2 | 4 | 5 | 20 | 7 | 22 | | |
| 2 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 14 | 19 | 67 | 7 | 14 | 6 | 21 | 6 | 32 | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 15 | 11 | 44 | 3 | 10 | 5 | 18 | 3 | 16 | | |
| 4 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 23 | 16 | 83 | 5 | 18 | 8 | 44 | 3 | 21 | | |
| 5 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 24 | 11 | 51 | 1 | 3 | 8 | 43 | 2 | 5 | | |
| 6 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 28 | 8 | 49 | 1 | 1 | 2 | 16 | 5 | 32 | | |
| 7 | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 35 | 6 | 17 | 1 | 2 | 2 | 5 | 3 | 10 | | |
| 8 | ՄԻՍԱԿՅԱՆ 16 | 20 | 86 | 5 | 25 | 7 | 32 | 8 | 29 | | |
| 9 | ՄԻՍԱԿՅԱՆ 22 | 18 | 100 | 3 | 12 | 7 | 34 | 8 | 54 | | |
| 10 | ԷՍՏՈՆԱԿԱՆ 5 (ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ) | 11 | 32 | 3 | 3 | 4 | 11 | 4 | 18 | | |
| 11 | ԷՍՏՈՆԱԿԱՆ 11 | 11 | 33 | 3 | 3 | 4 | 11 | 4 | 19 | | |
| 12 | ԷՍՏՈՆԱԿԱՆ 13 | 2 | 17 | | | 1 | 11 | 1 | 6 | | |
| 13 | ՖՈՒՉԻԿԻ 1 ՆՐԲ. 3 | 43 | 44 | | | 43 | 44 | | | | |
| 14 | ՖՈՒՉԻԿԻ 1 ՆՐԲ. 9 | 7 | 36 | 2 | 7 | 2 | 10 | 3 | 19 | | |
| 15 | ՖՈՒՉԻԿԻ 10 | 20 | 51 | 11 | 14 | 6 | 26 | 3 | 11 | | |
| 16 | ՖՈՒՉԻԿԻ 12 | 10 | 30 | 5 | 15 | 3 | 5 | 2 | 10 | | |
| 17 | ՖՈՒՉԻԿԻ 19 | 6 | 17 | 3 | 5 | 2 | 6 | 1 | 6 | | |
| 18 | ՖՈՒՉԻԿԻ 20 (ԿՈՈՊԵՐ.) | 7 | 34 | 1 | 4 | 3 | 23 | 3 | 7 | | |
| 19 | ՄԱՐԳԱՐՅԱՆ 10 | 31 | 119 | 5 | 16 | 19 | 72 | 7 | 31 | | |
| 20 | ՄԱՐԳԱՐՅԱՆ 17 (ԿՈՈՊԵՐ.) | 43 | 185 | 15 | 47 | 18 | 96 | 10 | 42 | | |
| 21 | ՄԱՐԳԱՐՅԱՆ 29*) | 64 | 252 | 23 | 62 | 23 | 86 | 18 | 104 | | |
| 22 | ՀԱԼԱԲՅԱՆ 31 | 35 | 100 | 6 | 10 | 23 | 50 | 6 | 40 | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | ՀԱԼԱԲՅԱՆ 49 | 26 | 101 | 6 | 16 | 16 | 60 | 4 | 25 | | |
| 24 | ՀԱԼԱԲՅԱՆ 57 | 38 | 148 | 16 | 48 | 14 | 60 | 8 | 40 | | |
| 25 | ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ 24 | 31 | 128 | 10 | 29 | 12 | 42 | 9 | 57 | | |
| 26 | ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ 8Ա | 12 | 46 | 4 | 6 | 3 | 12 | 5 | 28 | | |
| 27 | ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ 12 | 11 | 33 | 3 | 9 | 4 | 12 | 4 | 12 | | |
| 28 | ԱԲԵԼՅԱՆ 5 | 29 | 110 | 9 | 23 | 11 | 45 | 9 | 42 | | |
| | 3. ԷՐԵԲՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔ | 27 | 97 | 7 | 18 | 11 | 38 | 9 | 41 | | |
| 1 | ԳԱԶԵԳՈՐԾՆԵՐԻ 40 | 12 | 50 | 4 | 12 | 4 | 13 | 4 | 25 | | |
| 2 | ՄՈՒՐԱՑԱՆԻ 192 | 15 | 47 | 3 | 6 | 7 | 25 | 5 | 16 | | |
| | 5. ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔ | | | | | | | | | | |
| 1 | ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ 19 | 15 | 49 | 8 | 25 | 4 | 16 | 3 | 8 | | |
| | 6. ՆՈՐ ՆՈՐՔ ՀԱՄԱՅՆՔ | | | | | | | | | | |
| 1 | ՋՈՒՂԱՅԻ 5 | 54 | 257 | 7 | 18 | 33 | 154 | 14 | 85 | | |
| | ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ,<br>Գ. ՈՍԿԵՀԱՏ,<br>ԲՆ. ՏՈՒՆ | 16 | 55 | 8 | 21 | 6 | 29 | 1 | 4 | 1 | 7 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 681 | 2568 | 184 | 493 | 321 | 1185 | 175 | 889 | 1 | 7 |

*(Աղյուսակը խմբ., փոփ., լրաց. 08.07.04 N 1122-Ն)*

Տվյալները ենթակա են ճշտման՝ տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում:

Աղյուսակ 4

Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ

ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | Հասցեն | Փախստա-կանների ընտանիք. թիվը | Ընտանիք. անդամների թիվը | ընդհանուր ծավալից բնակվում են՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 սենյականոց | | 2 սենյականոց | | 3 սենյականոց | |
| | | | | բնա-կարան. թիվը | ընտանիք. անդամների թիվը | բնա-կարան. թիվը | ընտանիք. անդամների թիվը | բնա-կարան. թիվը | ընտանիք. անդամների թիվը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | ք. Երևան ընդամենը | 214 | 709 | 68 | 189 | 88 | 291 | 58 | 229 |
| | այդ թվում՝ | | | | | | | | |
| | 1. Աջափնյակ համայնք՝ | 176 | 583 | 61 | 173 | 64 | 209 | 51 | 201 |
| 1 | Շինարարների 6 | 19 | 66 | 4 | 13 | 7 | 23 | 8 | 30 |
| 2 | Շինարարների 14 | 11 | 50 | 3 | 6 | 3 | 14 | 5 | 30 |
| 3 | Շինարարների 15 | 10 | 32 | 5 | 16 | 3 | 10 | 2 | 6 |
| 4 | Շինարարների 28 | 6 | 23 | 2 | 8 | 2 | 9 | | 6 |
| 5 | Շինարարների 35 | 1 | 4 | | | | | 1 | 4 |
| 6 | Սիսակյան 16 | 1 | 2 | | | 1 | 2 | | |
| 7 | Սիսակյան 22 | 28 | 102 | 6 | 16 | 10 | 35 | 12 | 51 |
| 8 | Էստոնական 5 | 1 | 3 | 1 | 3 | | | | |
| 9 | Ֆուչիկի 1 նրբ. 9 | 21 | 80 | 7 | 21 | 12 | 46 | 2 | 13 |
| 10 | Ֆուչիկի 10 | 9 | 23 | 6 | 15 | 2 | 6 | 1 | 2 |
| 11 | Ֆուչիկի 12 | 12 | 36 | 7 | 19 | 2 | 5 | 3 | 12 |
| 12 | Ֆուչիկի 19 | 29 | 79 | 4 | 11 | 16 | 41 | 9 | 27 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Ֆուչիկի 20 (կոոպեր.) | 15 | 43 | 12 | 35 | 1 | 2 | 2 | 6 |
| 14 | Մարգարյան 10 | 3 | 12 | | | 1 | 3 | 2 | 9 |
| 15 | Մարգարյան 29 | 1 | 4 | | | 1 | 4 | | |
| 16 | Հալաբյան 49 | 2 | 5 | 1 | 1 | | | 1 | 4 |
| 17 | Լենինգրադյան 24 | 1 | 4 | 1 | 4 | | | | |
| 18 | Արզումանյան 8ա | 5 | 11 | 2 | 5 | 2 | 5 | 1 | 1 |
| 19 | Աբելյան 5 | 1 | 4 | | | 1 | 4 | | |
| | 2. Մալաթիա-Սեբաստիա համայնք | 38 | 126 | 7 | 16 | 24 | 82 | 7 | 28 |
| 1 | Արարատյան 1 զանգ.12 | 38 | 126 | 7 | 16 | 24 | 82 | 7 | 28 |

Տվյալները ենթակա են ճշտման՝ տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում:

**Աղյուսակ 5**

## Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

## ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| NN ը/կ | Հասցեն | Փոխհատուցվող բնակարանների թիվը՝ ընդամենը | այդ թվում՝ | | | | Անհրաժեշտ միջոցները՝ ընդամենը (մլն դրամ) | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1- սենյականոց | 2- սենյականոց | 3- սենյականոց | 4- սենյականոց | | 1- սենյականոց | 2- սենյականոց | 3- սենյականոց | 4- սենյականոց |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 6ա | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | ք. Երևան ընդամենը | 665 | 236 | 308 | 121 | | 1584,7 | 389,4 | 762,2 | 433,1 | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| | 1. Կենտրոն համայնք՝ | - | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պուշկինի 34 | 5 | 1 | 4 | | | 11,45 | 1,65 | 9,8 | 0 | |
| | Բրյուսովի 66 | 4 | | 2 | 2 | | 29,1 | | 12,5 | 16,6 | |
| | 2. Աջափնյակ համայնք` | 560 | 205 | 252 | 103 | | 1316,15 | 338,25 | 617,4 | 360,5 | |
| 1 | Շինարարների 6 | 14 | 4 | 7 | 3 | | 34,25 | 6,6 | 17,15 | 10,5 | |
| 2 | Շինարարների 14 | 19 | 9 | 5 | 5 | | 44,6 | 14,85 | 12,25 | 17,5 | |
| 3 | Շինարարների 15 | 11 | 7 | 3 | 1 | | 22,4 | 11,55 | 7,35 | 3,5 | |
| 4 | Շինարարների 23 | 16 | 7 | 7 | 2 | | 35,7 | 11,55 | 17,15 | 7 | |
| 5 | Շինարարների 24 | 11 | 2 | 8 | 1 | | 26,4 | 3,3 | 19,6 | 3,5 | |
| 6 | Շինարարների 28 | 8 | 2 | 4 | 2 | | 20,1 | 3,3 | 9,8 | 7 | |
| 7 | Շինարարների 35 | 6 | 2 | 3 | 1 | | 14,15 | 3,3 | 7,35 | 3,5 | |
| 8 | Սիսակյան 16 | 20 | 9 | 8 | 3 | | 44,95 | 14,85 | 19,6 | 10,5 | |
| 9 | Սիսակյան 22 | 18 | 6 | 6 | 6 | | 45,6 | 9,9 | 14,7 | 21 | |
| 10 | Էստոնական 5 (համատիրություն) | 11 | 4 | 5 | 2 | | 25,85 | 6,6 | 12,25 | 7 | |
| 11 | Էստոնական 11 | 11 | 4 | 6 | 1 | | 24,8 | 6,6 | 14,7 | 3,5 | |
| 12 | Էստոնական 13 | 2 | | 1 | 1 | | 5,95 | 0 | 2,45 | 3,5 | |
| 13 | Ֆուչիկի 1 նրբ. 3 | 43 | | 43 | | | 105,35 | 0 | 105,35 | 0 | |
| 14 | Ֆուչիկի 1 նրբ. 9 | 7 | 3 | 3 | 1 | | 15,8 | 4,95 | 7,35 | 3,5 | |
| 15 | Ֆուչիկի 10 | 20 | 13 | 6 | 1 | | 39,65 | 21,45 | 14,7 | 3,5 | |
| 16 | Ֆուչիկի 12 | 10 | 7 | 1 | 2 | | 21 | 11,55 | 2,45 | 7 | |
| 17 | Ֆուչիկի 19 | 6 | 3 | 2 | 1 | | 13,35 | 4,95 | 4,9 | 3,5 | |
| 18 | Ֆուչիկի 20 (կոոպեր.) | 7 | 1 | 3 | 3 | | 19,5 | 1,65 | 7,35 | 10,5 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Մարգարյան 10 | 31 | 13 | 13 | 5 | | 70,8 | 21,45 | 31,85 | 17,5 | |
| 20 | Մարգարյան 17 (կոոպեր.) | 43 | 15 | 18 | 10 | | 103,85 | 24,75 | 44,1 | 35 | |
| 21 | Մարգարյան 29 | 64 | 32 | 14 | 18 | | 150,1 | 52,8 | 34,3 | 63 | |
| 22 | Հալաբյան 31 | 35 | 6 | 23 | 6 | | 87,25 | 9,9 | 56,35 | 21 | |
| 23 | Հալաբյան 49 | 26 | 9 | 14 | 3 | | 59,65 | 14,85 | 34,3 | 10,5 | |
| 24 | Հալաբյան 57 | 38 | 16 | 14 | 8 | | 88,7 | 26,4 | 34,3 | 28 | |
| 25 | Լենինգրադյան 24 | 31 | 10 | 12 | 9 | | 77,4 | 16,5 | 29,4 | 31,5 | |
| 26 | Արզումանյան 8ա | 12 | 5 | 4 | 3 | | 28,55 | 8,25 | 9,8 | 10,5 | |
| 27 | Արզումանյան 12 | 11 | 5 | 6 | | | 22,95 | 8,25 | 14,7 | 0 | |
| 28 | Աբելյան 5 | 29 | 11 | 13 | 5 | | 67,5 | 18,15 | 31,85 | 17,5 | |
| | 3. Էրեբունու համայնք | 27 | 12 | 9 | 6 | | 62,85 | 19,8 | 22,05 | 21 | |
| 1 | Գաջեգործների 40 | 12 | 5 | 3 | 4 | | 29,6 | 8,25 | 7,35 | 14 | |
| 2 | Մուրացանի 192 | 15 | 7 | 6 | 2 | | 33,25 | 11,55 | 14,7 | 7 | |
| | 5. Շենգավիթ համայնք | | | | | | | | | | |
| 1 | Եղբայրության 19 | 15 | 10 | 5 | | | 28,75 | 16,5 | 12,25 | 0 | |
| | 6. Նոր Նորք համայնք | | | | | | | | | | |
| 1 | Ջուղայի 5 | 54 | 8 | 36 | 10 | | 136,4 | 13,2 | 88,8 | 35 | |
| | ՀՀ Արմավիրի մարզ,<br>գ. Ոսկեհատ,<br>բն. տուն | 16 | 8 | 6 | 1 | 1 | 9,7 | 3,7 | 4,0 | 0,9 | 1,1 |
| | Ընդամենը | 681 | 244 | 314 | 122 | 1 | 1594,4 | 393,1 | 766,2 | 434,0 | 1,1 |

***(Աղյուսակը խմբ., փոփ., լրաց. 08.07.04 N 1122-Ն)***

* Հաշվարկի հիմքում վերցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2000 թ. I եռամսյակի

տվյալները:

Տվյալները ենթակա են ճշտման՝ տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում:

**Աղյուսակ 6**

Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | Հասցեն | Փոխհատուցվող բնակարանների թիվը՝ ընդամենը | այդ թվում՝ | | | Անհրաժեշտ միջոցները՝ ընդամենը (մլն դրամ) | այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 սենյա-կանոց | 2 սենյա-կանոց | 3 սենյա-կանոց | | 1 սենյա-կանոց | 2 սենյա-կանոց | 3 սենյա-կանոց |
| | | | | | | | | | |
| 1 | 2 | | | | | | | | |
| | ք. Երևան ընդամենը | 214 | 142 | 50 | 22 | 433,8 | 234,3 | 122,5 | 77 |
| | այդ թվում՝ | | | | | | | | |
| | 1. Աջափնյակ համայնք՝ | 176 | 123 | 35 | 18 | 351,7 | 202,95 | 85,75 | 63 |
| 1. | Շինարարների 6 | 19 | 13 | 3 | 3 | 39,3 | 21,45 | 7,35 | 10,5 |
| 2. | Շինարարների 14 | 11 | 5 | 2 | 4 | 27,15 | 8,25 | 4,9 | 14 |
| 3. | Շինարարների 15 | 10 | 8 | 2 | | 18,1 | 13,2 | 4,9 | 0 |
| 4. | Շինարարների 28 | 6 | 3 | 3 | | 12,3 | 4,95 | 7,35 | 0 |
| 5. | Շինարարների 35 | 1 | | 1 | | 2,45 | 0 | 2,45 | 0 |
| 6. | Սիսակյան 16 | 1 | 1 | | | 1,65 | 1,65 | 0 | 0 |
| 7. | Սիսակյան 22 | 28 | 15 | 7 | 6 | 62,9 | 24,75 | 17,15 | 21 |
| 8. | Էստոնական 5 | 1 | 1 | | | 1,65 | 1,65 | 0 | 0 |
| 9. | Ֆուչիկի 1 նրբ. 9 | 21 | 14 | 6 | 1 | 41,3 | 23,1 | 14,7 | 3,5 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10. | Ֆուչիկի 10 | 9 | 8 | 1 | | 15,65 | 13,2 | 2,45 | 0 |
| 11. | Ֆուչիկի 12 | 12 | 10 | 1 | 1 | 22,45 | 16,5 | 2,45 | 3,5 |
| 12. | Ֆուչիկի 19 | 29 | 22 | 5 | 2 | 55,55 | 36,3 | 12,25 | 7 |
| 13. | Ֆուչիկի 20 (կոոպեր.) | 15 | 15 | | | 24,75 | 24,75 | 0 | 0 |
| 14. | Մարգարյան 10 | 3 | 2 | | 1 | 6,8 | 3,3 | 0 | 3,5 |
| 15. | Մարգարյան 29 | 1 | | 1 | | 2,45 | 0 | 2,45 | 0 |
| 16. | Հալաբյան 49 | 2 | 1 | 1 | | 4,1 | 1,65 | 2,45 | 0 |
| 17. | Լենինգրադյան 24 | | | | | 1,65 | 1,65 | 0 | 0 |
| 18. | Արզումանյան 8ա | 5 | 4 | 1 | | 9,05 | 6,6 | 2,45 | 0 |
| 19. | Աբելյան 5 | 1 | | 1 | | 2,45 | 0 | 2,45 | 0 |
| | 2. Մալաթիա-Սեբաստիա համայնք | 38 | 19 | 15 | 4 | 82,1 | 31,35 | 36,75 | 14 |
| | Արարատյան 1 զանգված 12 | 38 | 19 | 15 | 4 | 82,1 | 31,35 | 36,75 | 14 |

* Հաշվարկի հիմքում վերցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2000 թ. I եռամսյակի տվյալները:

Տվյալները ենթակա են ճշտման՝ տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում:

**Աղյուսակ 7**

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ՝

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

| | **Անհրաժեշտ միջոցները*) (մլն դրամ)** | **Վերաբնակեցվող ընտանիքների թիվը** |
|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | **2230,6** | **x** |
| **այդ թվում՝** | | |
| | | |

| | | |
|---|---|---|
| ա) վթարային բնակարաններից ընտանիքների վերաբնակեցում՝ | 2028,8 | 895 |
| - վարձակալներ և սեփականատերեր | 1594,8 | 681 |
| - փախստականներ | 434,0 | 214 |
| բ) վթարային բնակելի տների քանդում | 201,8 | x |

***(Աղյուսակը խմբ. 08.07.04 N 1122-Ն)***

*) Տվյալները ենթակա են ճշտման՝ տարեկան ծրագրերի իրականացման ընթացքում:

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 2000 թվականի*
*հոկտեմբերի 25-ի N 682 որոշմամբ*

## Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների (այսուհետև՝ քանդման ենթակա վթարային բնակելի տներ) բնակիչների վերաբնակեցման կարգը:

2. Սույն կարգով բնակելի տարածությամբ ապահովվում են քանդման ենթակա վթարային բնակարաններն զբաղեցնող հետևյալ բնակիչները՝

ա) պետական կամ համայնքային բնակարանային ֆոնդի վարձակալները (այսուհետև՝ վարձակալներ) և սեփականատերերը.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից հաշվառված ու այդ բնակարաններում առնվազն 5 տարի բնակվող փախստականները:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված վերաբնակեցումն իրականացվում է Երևանի քաղաքապետի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերված բնակարան հատկացնելու կամ դրամական փոխհատուցման միջոցով, տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով այդ նպատակների համար նախատեսված հատկացումների սահմաններում, ընդ որում՝

ա) վարձակալներին՝ բնակարաններ՝ նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսդրության նորմերով սահմանվածը կամ, համապատասխան բնակարանի առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում, դրամական աջակցություն՝ հաստատված ծրագրով՝ շուկայական արժեքի չափով.

բ) սեփականատերերին՝ բնակարաններ՝ նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվով, կամ դրամական փոխհատուցում՝ հասանելիք բնակարանի շուկայական արժեքի չափով.

գ) փախստականներին՝ բնակարաններ՝ նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» N 330 որոշմամբ հաստատված կարգի նորմերով սահմանվածը կամ, համապատասխան բնակարանի առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում, դրամական աջակցություն՝ հաստատված ծրագրով՝ շուկայական արժեքի չափով:

***(3-րդ կետը լրաց. 06.11.01 N 1070)***

4. Ձեռք բերվող (գնվող) բնակարանները սույն կարգի 2-րդ կետում նշված բնակիչներին հանձնվում են վարձակալության և կարող են մասնավորեցվել «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Ձեռք բերվող (գնվող) բնակարանների առավելագույն արժեքը կամ դրամական փոխհատուցման առավելագույն չափը որոշվում է` ելնելով վերաբնակեցվող ընտանիքին հասանելիք բնակարանի` Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից վերցված` տվյալ բնակավայրում (Երևանում` բացառելով առաջին գոտում ձևավորված արժեքը) ծրագրի իրականացման սկզբին նախորդող եռամսյակի դրությամբ ձևավորված շուկայական միջինացված արժեքից:

6. Երևանի քաղաքապետը տարեկան ծրագրում ընդգրկված վթարային բնակարաններն զբաղեցնող բնակիչների հետ կնքում է վերաբնակեցման մասին պայմանագիր: Պայմանագրով սահմանվում են կողմերի հարաբերությունները և բնակարանների հատկացման կամ դրամական փոխհատուցման ու զբաղեցրած վթարային բնակարանների ազատման հիմնական պայմանները: Կնքված պայմանագրերը գրանցվում են հաշվառման մատյանում (ձևը կցվում է) : Պայմանագրի մեկ օրինակը տրվում է բնակչին:

7. Ինքնակամ զբաղեցված բնակարաններն ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Վթարային բնակելի տունը վերաբնակեցման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում պարտադիր ենթակա է մրցութային հիմունքներով ընտրված կազմակերպության կողմից քանդման:

9. Իրացված տարածքների հետագա կառուցապատումն իրականացվում է քանդման ենթակա բնակելի տների տեղաբաշխման սխեմայի հիման վրա ճշգրտված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

10. Վթարային բնակելի տների քանդման աշխատանքներն իրականացվում են այդ նպատակով տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված հատկացումների սահմաններում` հաշվի առնելով օգտագործման համար պիտանի շինարարական նյութերի արժեքի վերադարձը:

<u>*Ձև*</u>

## Մ Ա Տ Յ Ա Ն

## ______________________ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

| Բնակարանի հասցեն | Ազգանունը, անունը, հայրանունը | Անձնագրային տվյալները | Բնակարանում հաշվառված և բնակվող ընտանիքների անդամների թիվը | Զբաղեցված բնակարանի սենյակների թիվը | Հատկացվող բնակարանի սենյակների թիվը | Վերաբնակեցման մասին պայմանագրի կնքման ամսաթիվը | Բնակարանի զբաղեցման հիմքերը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 2000 թվականի*
*հոկտեմբերի 25-ի N 682 որոշմամբ*

## Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների (այսուհետև` քանդման ենթակա վթարային բնակելի տներ) քանդման առաջնահերթությունը որոշելու մեթոդաբանական հիմքերը:

2. Քանդման ենթակա վթարային բնակելի տների քանդման առաջնահերթությունը որոշվում է բնակելի տունը բնութագրող ցուցանիշների գնահատման միջոցով` բալային եղանակով (առավելագույնը` 10 միավոր):

3. Սույն կարգով սահմանվում են քանդման ենթակա վթարային բնակելի տան քանդման առաջնահերթությունը որոշելու ժամանակ օգտագործվող ցուցանիշները, դրանցից յուրաքանչյուրին համապատասխանող թվային արժեքների մեծությունները և առաջնահերթությունը որոշելու բանաձևը:

## II. ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

4. Քանդման ենթակա վթարային բնակելի տների քանդման առաջնահերթությունը որոշելու ժամանակ օգտագործվող ցուցանիշներն են`

ա) բնակելի տան վնասվածությունը (ամբողջությամբ, մասամբ).

բ) քանդման ենթակա բնակարանների թիվը.

գ) հարկայնությունը.

դ) աստիճանավանդակների վիճակը.

ե) ընտանիքի վերաբնակեցման համար անհրաժեշտ ծախսերը:

## III. ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Քանդման ենթակա վթարային բնակելի տան վնասվածության ցուցանիշը բնութագրվում է հետևյալ միավորներով`

ա) ամբողջությամբ` IV աստիճանի` 10 միավոր.

բ) կիսով չափ` IV աստիճանի` 5 միավոր.

գ) մեկ սեկցիան` IV աստիճանի, մնացած սեկցիաները` III աստիճանի` 3 միավոր.

դ) 1-ին սեկցիան` IV աստիճանի, մնացածը` II աստիճանի` 2 միավոր:

6. Քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակարանների թիվը, առավելագույնը 72 բնակարանի դեպքում, ընդունվում է 10 միավոր, մնացած դեպքերում` գնահատվում են համամասնորեն:

7. Հարկայնությունը, առավելագույնը 5 հարկի դեպքում, ընդունվում է 10 միավոր, մնացած դեպքերում` գնահատվում են համամասնորեն:

8. Աստիճանավանդակների վիճակը բնութագրվում է` ելնելով բնակիչների տարահանման հնարավորության աստիճանից, և առավելագույնը` բոլոր մուտքերի վթարայնության դեպքում, ընդունվում է 10 միավոր, մնացած դեպքերում` գնահատվում են համամասնորեն:

Գնահատումը կատարվում է լիցենզավորված մարմնի կողմից:

9. Մեկ ընտանիքի վերաբնակեցման համար անհրաժեշտ ծախսերի ցուցանիշի միավորն ընդունվում է 10 միավոր` անհրաժեշտ միջոցների նվազագույն չափի դեպքում: Վերաբնակեցման համար անհրաժեշտ միջոցների նվազագույն չափը որոշվում է տարեկան ծրագիրը կազմելու պահին:

## IV. ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԲԱՆԱՁԵՎԸ

10. Քանդման ենթակա վթարային բնակելի տների քանդման առաջնահերթությունը որոշելու բանաձևը (այսուհետև` բանաձև) սույն կարգի 5-9-րդ կետերում նշված ցուցանիշների թվային արժեքների գումարն է: Բանաձևի օգնությամբ հաշվարկվում է յուրաքանչյուր քանդման ենթակա վթարային բնակելի տան միավորը` մեկ տասներորդականի ճշտությամբ: Քանդման ենթակա վթարային բնակելի տան քանդման առաջնահերթությունը տրվում է առավելագույն միավորներ ունեցող տներին` ըստ նվազող միավորների:

Հավասար միավորներ ունեցող քանդման ենթակա վթարային բնակելի տների քանդման առաջնահերթությունը ճշգրտվում է նշված բնակելի տների տեղաբաշխման ուրվագծի հիման վրա քաղաքաշինական փաստաթղթերով

ամրագրված դրույթներին համապատասխան:

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 2000 թվականի*
*հոկտեմբերի 25-ի N 682 որոշմամբ*

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՏՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ

| | Անհրաժեշտ միջոցները՝ ընդամենը (մլն դրամ) | այդ թվում՝ | | Վերաբնակեցվող ընտանիքների թիվը՝ ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | վարձա-կալներ և սեփա-կանա-տերեր | փախստա-կանների ընտա-նիքներ | | վարձակալներ և սեփականա-տերեր | փախստա-կանների ընտա-նիքներ |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | 350,855 | - | - | 132 | 78 | 54 |
| Երևանի քաղաքապետարան | | | | | | |
| ա) քանդման ենթակա վթարային բնակարաններում բնակվող ընտանիքների վերաբնակեցում | 321.725 | 197.075 | 124.65 | 132 | 78 | 54 |
| Շինարարների 6 | 101.57 | 54.87 | 46.7 | 39 | 20 | 19 |
| Ֆուչիկի 10 | 81.99 | 58.425 | 23.565 | 36 | 25 | 11 |
| Ֆուչիկի 19 | 77.03 | 24.44 | 52.59 | 32 | 9 | 23 |
| Միսակյան 16 | 61.135 | 59.34 | 1.795 | 25 | 24 | 1 |
| բ) վթարային տների քանդում | 29.13 | - | - | - | - | - |

***(Ծրագիրը խմբ. 06.11.01 N 1070)***

**Ծանոթագրություն**: Հաշվարկում օգտագործված են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հրապարակված 2001 թվականի առաջին եռամսյակի տվյալները՝ հաշվի առնելով 2001 թվականի ընթացքում շուկայի հնարավոր արժեքային տատանումները (բացառելով 1-ին գոտու ձևավորված արժեքը).

1 սենյականոց՝ 1795 հազ. դրամ,
2 սենյականոց՝ 2750 հազ. դրամ,
3 սենյականոց՝ 3550 հազ. դրամ: